

ԾՐԱԳԻՐ

«Տավուշի մարզի Բերդ համայնքի Չինչին բնակավայրում 34 տների մասնակի նորոգում»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի Չինչին բնակավայրում 34 ընտանիքի տների տանիքների հիմնանորոգում, նոր պատուհանների և մուտքի դռների տեղադրում: Համայնքի բնակարանային պայմանների բարելավում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է բարեգործի խրախուսում և նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	«ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամ: Երևան, Կարապետ Ուլինցու 14: ԱՄՆ-ի «Հայ օգնության և աջակցման ընկերակցություն (ARDA)» շահույթ չհետապնդող կազմակերպություն:
4.	Ծրագիրը կատարողը	«ԱՌԴԱ» բարեգործական հիմնադրամ (Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզ: Քաղաքաշինության բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	52,200,000 դրամ:
7.	Բարեգործությունն ստացողը	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդ համայնքի Չինչին բնակավայրի սոցիալապես անապահով 34 ընտանիքներ: Ընտանիքների ընտրությունը կատարվել է «ԱՄՔՈՐ Հայաստան» բարեգործական հիմնադրամի ընտանիքների ընտրության հանձնախմբի առաջարկությամբ՝ համայնքի ղեկավարների կողմից, ինչպես նաև համագործակցելով միասնական սոցիալական ծառայության հետ:

8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2022 թվականի հունվարի 10-ից մինչև դեկտեմբերի 30-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Շինարարական նյութերի տրամադրում և աշխատանքների իրականացում՝ 10.01.2022 թ.- 30.12.2022 թ., 52,200,000 դրամ:
10.	Ձեռք բերվող ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	Մետաղապլաստե պատուհաններ՝ 494 քմ -12,350,000 դրամ Տանիքի թիթեղ՝ 5430 քմ - 25,400,000 դրամ Փայտանյութ՝ 38 խմ-7,220,000 Մուտքի դռներ՝ 34 հատ – 2,380,000 դրամ Այլ շինարարական նյութեր, գործիքներ՝ 2,650,000 դրամ Շինարարական աշխատանքների իրականացում՝ 2,200,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Ծրագրի իրականացման համար կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում: Ծրագիրն իրականացվելու է հիմնադրամի ընդհանուր ծախսերի հաշվին:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ	Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Բերդի համայնքապետարան, միասնական սոցիալական ծառայություն:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվի տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՓՈՒՎԱՐՉԱԴԵՏ

Հ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ